



Project funded by the EU

Ծագիրը ֆինանսավորվել է ԵՄ կողմից

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՍՈՒԼԻ ՀԱՄԱՐ

Երևան 23-ը փետրվարի

Այսօր մեկնարկեց **Մարտահրավերներից՝ հնարավորություններ** խորագրով երկօրյա կոնֆերանսը, որի ընթացքում ներկայացվում են ԵՄ ֆինանսական աջակցությանն արժանացած երեք նախաձեռնություններ, որոնք ուղղված են աղբահանության և սանմաքրման ծառայությունների բարելավմանը Հայաստանի տարբեր համայնքներում:

Նախաձեռնություններից մեկը միջսահմանային է և իրականացվել է Իջևանի և վրացական Բոլնիս քաղաքների համատեղ ջանքերով: Ծրագիրն ավարտական փուլում է, և հայ ու վրացի գործընկերները հավաքվել են ի մի բերելու արդյունքները: Դրանց թվում են՝ երկու գործընկեր քաղաքներ համատեղ, միևնույն մեթոդաբանությամբ մշակել և ընդունել են աղբահանության ռազմավարություն, իրականացրել են հանրային իրազեկման լայնածավալ գործողություններ: Երկու քաղաքներում էլ առաջին անգամ սկսել է կիրառվել աղբի տեսակավորում:

Մյուս երկու նախաձեռնությունները մեկնարկել են վերջերս և ուղղված են Սյունիքի և Վայոց ձորի մարզերին: Դրանցից մեկը՝ **Մաքուր դաշինք** վերնագրով վերաբերում է վերջերս խշորացած Գորիս և Գորայք համայնքներում արդյունավետ աղբահանության համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ձևավորմանը, տեխնիկական միջոցների տրամադրմանը և կենցաղավարման մշակույթի բարելավմանը: Այստեղ ևս ներդրվելու է աղբի տեսակավորման, հատկապես պլաստիկ թափոնների (շշերի, տարանների, տոպրակների) տարանջատման պրակտիկա:

Համաժողովի ընթացքում ներկայացված երրորդ ծրագիրը նորարարական է և նմանօրինակ չունի տարածաշրջանում: Կապան քաղաքում հիմնվելու է պլաստիկ թափոններից շինանյութերի ստացման *ստարտափ* արտադրամաս, որի համար որպես հումք կծառայեն աղբից տարանջատված պլաստիկ թափոնները: Կստեղծվի 35 նոր աշխատատեղ: Արտադրամասին պլաստիկ թափոններով անխափան ապահովելու նպատակով համապատասխան ենթակառուցվածքներ կձևավորվեն Եղեգնաձոր, Ջերմուկ, Վայք, Սիսիան, Գորիս, Կապան, Քաջարան, Մեղրի քաղաքներում: Ստարտափը հիմնվելու է բնապահպանական և աշխատանքի անվտանգության միջազգային ստանդարտների համաձայնատասխան, անցնելու է ԻՍՕ հավաստագրում:

ՄԻՆԶԳՈՆ (Ուրբան Հիմնադրամ)

Ծրագրերը ֆինանսավորվում են Եվրոպական Միության կողմից:

Համաժողովը կազմակերպել է Ուրբան հիմնադրամը: Օրակարգը կցվում է:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Արմինե Թուխիկյանին՝ 091 43 61 04, 060 61 20 72

info@urbanfoundation.am